ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

09-ը մայիսի 2024թ.

ՈՒՂԵՐՁ Մայիսի 9-ի՝
Հաղթանակի և խաղաղության օրվա կապակցությամբ

Տասնամյակներ շարունակ Մայիսի 9-ը հայոց ազգային տոնացույցի ամենափառավոր և ուրախ էջերից էր: Արդեն չորս տարի օրվա բովանդակությունը զգալիորեն փոխված է, սակայն համայն հայության հիշողության մեջ և պատմության էջերում այս օրը շարունակում է մնալ հաղթանակների, ոգեշնչման և հպարտության բացառիկ օր. այն մշտապես հիշեցնելու է Հայրենական մեծ պատերազմում շուրջ կես միլիոն հայերի անուրանալի մասնակցությունը, Արցախյան առաջին ազատամարտում հրաշագեղ Շուշի բերդաքաղաքի ազատագրումն ու ջոկատներից պաշտպանության բանակի ստեղծման նշանակալից իրադարձությունը:

Մայիսի 9-ը մեծապես նաև խոնարհումի ու երախտագիտության օր է. առաջնահերթ խորին հարգանքով ու խոնարհումով ուզում եմ հիշենք հայրենիքի ազատագրման և պաշտպանության մարտերում նահատակված հայորդիներին, որոնք կյանքի գնով են պարգևել մեզ հպարտության ու հաղթության հերոսապատում էջեր:

2020թ. պատերազմի ելքն ու Արցախի բռնազավթումը ցավալիորեն բեկեց երբեմնի եռատոնի տրամադրությունը, սակայն մենք պետք է երախտագիտությամբ հիշենք նաև մեր կողքին ապրող, մայիսյան հերոսամարտերում գնահատելի ներդրում ունեցող անհատներին:

Հարգարժա՛ն վետերաններ և ազատամարտիկներ.

Այսօր ձեր օրն է. ընդունեք իմ ջերմագին շնորհավորանքն ու շնորհակալությունը ձեր մղած ազնիվ, արդար ու հաղթական պայքարի համար:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Այս նվիրական օրով, մենք պետք է լինենք ուժեղ և միասնական, առաջնորդվենք մեր ավագ սերունդների, մեր եղբայրների անկոտրում կամքով և նախանշած փառավոր ուղիով, գործենք նոր հաղթանակների հավատով, նոր եռատոն կերտելու ակնկալիքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ